ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«------» «----------» 2010թ.** N -.Ա

## «ՆՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Նոր Ներդրումներ» փակ բաժնետիրական ընկերությունը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) Բաժնետիրական ընկերության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ապահովել լուծարման հանձնաժողովի ստեղծումը« դրա կազմում ընդգրկելով՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներին:

3. Լուծարման հանձնաժողովին՝

1) Բաժնետիրական ընկերության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին բաժնետիրական ընկերությունը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝

ա. Ընկերության դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը«

բ. «Նոր ներդրումներ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող «Գյումրու Տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության մնացած տոկոս բաժնետոմսերը հանձնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնօրինությանը, իսկ մնացած գույքը հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

## Տեղեկանք – հիմնավորում

«Նոր Ներդրումներ» ՓԲԸ-ն ընդգրկված է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկերում: ՀՀ կառավարության 20.12.2007թ. թիվ 1539-Ն որոշմամբ ընկերությունը ներկայացվել է մասնավորեցման՝ մրցույթով: Մրցույթը չի կայացել հայտ չլինելու պատճառով:

ՀՀ կառավարության 13.12.1999թ. թիվ 747 որոշման 9-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, ընկերության 100 տոկոս պետական բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը վերապահված է ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

«Հայաստանի Ներդրումային ընկերություն» ՓԲԸ-ն, որը 06.12.2004թ. անվանափոխվել է «Նոր Ներդրումներ» ՓԲԸ-ի հիմնադրվել է 1998թ. դեկտեմբերին ՀՀ կառավարության թիվ 767 որոշմամբ: Ընկերությունը Շվեյցարական «Անդրե Գրուպ» ընկերության և ԱՄՆ գյուղդեպարտամենտի (USDA) հետ համատեղ իրականացրել է հայաստանյան սննդի վերամշակման չորս առաջատար ձեռնարկությունների արտադրության զարգացման ծրագիրը:

Ծրագիրը ավարտվել է, որի շրջանակներում տրամադրված փոխառությունների մայր գումարների և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարների վերադարձը և մարումները ավարտվել են 2001-2004թթ:

Գյումրի քաղաքում տեխնոպարկ ստեղծելու նպատակով «Նոր ներդրումներ» ՓԲԸ-ն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը ներկայացրել է հայեցակարգ, որն էլ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 15.02.2005թ. «Գյումրի քաղաքում տեխնոպարկ ստեղծելու նախապատրաստական միջոցառումների մասին» թիվ 31-Ա հրամանով հավանության է արժանացել:

Հայեցակարգը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը և համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մարտի 2-ի նիստի թիվ 8 արձանագրության և նրա հավելվածի Գյումրու «Անալիտսարք-1» ՓԲԸ-ի արտադրական տարածքի վրա ստեղծվել է «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ն, որի հիմնադիրներն են համարվում Երևանի «Նոր ներդրումներ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 26ա) 49% բաժնեմասով և Գյումրու «Անալիտսարք-1» ԲԲԸ-ն (ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 24) 51% բաժնեմասով:

Հիմք ընդունելով վերը նշված արձանագրությունը, ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 17.07.2006թ. թիվ 158-Ա հրամանով հաստատվել է «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ի ստեղծման ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը, որով ընկերության կանանադրական կապիտալում «Նոր ներդրումներ» ՓԲԸ-ի կողմից կատարվել է 6.0 մլն. դրամի ներդրում և 17.0 մլն. դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

«Նոր Ներդրումներ» ՓԲԸ-ի և «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ի միջև 01.08.2006թ.ին N 001-06-S կնքված փոխառության պայմանագրի հատկացված գումարը ենթակա է մարման 2011 թվականի օգոստոսի 1-ին:

«Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ի հետագա կայացման, կազմակերպչական, կադրային և այլ բնույթի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորում չի իրականացվել, որի հետևանքով «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ն չի կայացել:

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը, հաշվի առնելով, որ «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ի ստեղծումն իրականացվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից և նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ գործունեություն ծավալելու համար ընկերությունը ներկայումս չունի համապատասխան դրամական միջոցներ և վարչական տարածք՝ նախագծով առաջարկվում է Ընկերությունը լուծարել և բաժնետիրական ընկերության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո՝

ա) Ընկերության դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը«

բ) «Նոր ներդրումներ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող «Գյումրու Տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության 49 տոկոս բաժնետոմսերը հանձնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնօրինությանը, իսկ մնացած գույքը հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը։